

(38 - K
1858)

Ն. ԳԻՐՏԱ



ՈՏԱՐԵՐԿՐՈՒՅԹՆԵՐ

ՊԵՏՐՈՎ

891.715

4-68

-6 NOV 2011
ԳՈՐԾՈՒ

391.715
Վ-68


Ն. ԳԻՐՏԱ

ՈՏԱՐԵՐԿՐՈՒԹԻՒՆ

Եկարներ
Ռ. ԲՈՐՈՎԸՆՎԱՅՐԻ

M E S Z R U S
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱԿԱՄԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ
1938

Պատ. Խմբագիր՝ Դ. Դադարյան
Թաղաղմ. Գոր. Հակոբյան
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ան. Դասպ Մոյան
Սըբագրիչ՝ Դար. Հակոբյան



Սեպտեմբերի մի տար որ տըակտուրիստ Անտոշկան աշխատում եր սահմանին բոլորին մատիկ մի հողամասում։

Աշխատանքը վերջացնելով՝ Անտոշկան մեքենայից իջավ, քրանած ու կարմրատակած ճակատը թևերով սրբեց, շեկիկ մագերն ուղղեց, գրպանից գլանակը հանեց, նստեց թմբին ու սկսեց ծինել։

Իրենից մի տաս քայլ հեռու Անտոշկան փայլուն ու նեղ մի վտակ եր տեսնում։ Վտակն ինչ-վոր հեռու աեղից եր սկսվում, դաշտը յերկու մասի կիսում ու կորչում կադնու պուրակում։

Այդ վտակը սահմանն եր։ Նրա այն կողմը

Դրակիտի լեռոր 7.— 4636 Հրատ. 4264.
Պատվեր 34. Տիրաժ 5000.

Թուղթ 62×94 Տպագր. 13/10 մամ.

Մեկ մամ. 17280 նշան. Հեղինակ. 2/3 մամ.

Հանձնված է արտագրության 11 սեպտեմբերի 1937 թ.

Ստորագրված է տպագրության համար 17 մարտի 1938 թ.

Գինը 50 կ.

Կետիրատի 1 տպարան, Յերևան, Անին 65

մի ուրիշ, արդեն վոչ խորհրդային յերկիր
եր, և կյանքն այդ յերկրում բոլորովին ուրիշ
եր: Անտոշկան սիրում եր թմբին նստել ու
նայել, թե ինչ են անում վտակից այն կողմը՝
արտասահմանում, այն մարդիկ, վորոնց նա
«ոտարերկրացիներ» եր անվանում: Նա յեր-
բեմն նրանց ձայն եր տալիս, բայց նրանք
չեյին պատասխանում:

Այդ ըոպեյին դաշտում մարդ չկար: Խո-
զանի մեջ ագռավներն եյին կովում ու աղմը-
կում, իսկ կաղնու պուրակի մոտ մի շեկուկ
կով եր թափառում:

Թմբին նստելուց Անտոշկան ձանձրացավ,
դլանակը դեն զցեց, մոտեցավ տրակտորին,
մի տաս ըոպե զբաղվեց մոտոռով, ապա ցատ-
կեց հարթակին ու լծակը դարձրեց, շուր յե-
կավ ու գութանի մոտ սպիտակագլուխ մի
աղջիկ տեսավ: Նայում ե նրա լայն բաց
արած աչքերին, նրա ձեռքին, վորով պատա-
ռոտված հագուստի փեշերն եր հավաքում, և
ժպտում ե:

— Յետ փախիր,— ձայն տվեց նա ու
լծակը քաշեց: Տրակտորն առաջ շարժվեց:

Հարեան արտին մոտենալով՝ Անտոշկան
կրկին տեսավ այդ աղջկան: Նա սայթաքելո
վագում եր տրակտորի հետեւից:



«Մի տես, Ե, հետաքրքրվում ե», — մտա-
ծեց Անտոշկան:

Նա տրակտորը կանգնեցրեց ու հարցրեց:
— Ո՞ւմ յերեխան ես:

Աղջիկը լուռ ե:
— Մայրիկդ ճաշդ յեփելու յե: Տես, թե
ուր ես փախել:

— Չե-Ե, — ասում ե աղջիկը, — յես մայրիկ
չունեմ:

— Այ թե ինչ: Տեսնում եմ ախր, շա-
պիկդ շատ ե քրքրված: Կոլտնտեսությունն
ինչու նորը չի տալիս:

Աղջիկը չի խոսում:
— Ի՞նչ, միթե դու ինձ չես ճանաչում:
Այստեղ բոլորն ել ինձ ճանաչում են:

Հետեվից ձիու դոփյուն ե լավում: Միջ-
նակով սահմանապահների հեծելադետն եր
գնում: Առջեի ձիավորը ձեռքով ե անում,
և տրակտորիստը մեքենան կանգնեցնում ե:
Սահմանապահները մոտենում են ու խնդրում
թույլ տալ ծխախոտը նրա կրակով վառել:
Ավագ սահմանապահը, վորի բեխերը նոր
ելին ծլել, հարցնում ե.

— Եղ ինչ ե, աղջիկդ ե:
— Վնրտեղից, — ժպսում ե Անտոշկան: —

Ուրիշի աղջիկ ե, տրակտորով ե հետաքրք-
քրվում:

— Ա-ա: Վնրտեղացի յես:
— Ենտեղից, — կամացուկ ասում ե աղ-
ջիկը:

— Ենտեղից — վնրտեղից:
— Յես կովն եյի արածեցնում:
— Ո-հո, նա տարերկրուհի յե, — հան-
կարծ գլխի յե ընկնում տրակտորիստը:
Յես նրա կովը տեսա: Շեկ կով Ե՞ են մյուս
կողմը կանգնած: Հենց այդպես ել կա:

Աղջիկը գլխով ե անում:
Սահմանապահներն իրար են նայում:
— Այ քեզ պատմություն, — ասում ե
ավագը:

— Բան բացվեց, — զարմանում ե Անտոշ-
կան:

Աղջիկը լաց ե լինում:
— Ի՞նչ ես ճգում, — հարցնում ե տրակ-
տորիստն աղջկան: — Մի վախենաք Այս, սի-
րելիս, կարմիր բանակն ե:

Աղջիկն ավելի յե լաց լինում:
— Գույե սրան կտանեք մինչև վտակը,
թող վազ տաղնա տուն, — առաջարկում ե
Անտոշկան:

— Դու ել բան ասացիր, —խիստ կերպով
պատասխանում ե ավագ սահմանապահը: —
Սահմանը վազ տալ-անցնել չի կարելի:
Ստիպված նրան պետք ե տանենք ուղեկալ:
Այնտեղ պետը կքննի, թե նա ով ե և վոր-
տեղացի: Լսում ես, աղջի: Դեհ, յեկ հետներա-
գնանք: Բայց դու մի վախենա: Խնձոր
ուզում ես:

Նա մի մեծ ու կարմիր խնձոր ե հա-
նում և, թամբից կռանալով տալիս ե աղջ-
կան: Աղջիկը խնձորն առնում ե, ժպտում,
վստահորեն ձգվում դեպի սահմանապահն
ու ընկնում թամբի մեջ:

— Դեհ, բռնիր, —ասում ե սահմանապահը:
Հո չես ընկնի:

— Չե, —վստահ կերպով ասում ե աղջիկը:
— Բա ինչպես յեղավ, վոր յեկար այս-
տեղ, —հարցնում ե ավագ սահմանապահն
աղջկան:

— Ենպես... Մեքենան փնչում եր, յես ել
յեկա:

Սահմանապահները ձիերն առաջ քշեցին:
Աղջիկը խնձորն ուտելուց հետո իրեն այն-
պես եր զգում, ինչպես իրենց տանը, ու սկսեց
խոսել: Նա սահմանապահին պատմեց իրենց



գյուղի մասին, ստրաժնիկի մասին, հարևանի
շար շան մասին, վոր «միանգամից յերեք
հոգու յե կծել»:

Ուղեկալի մոտ հեծելազետը հանդի-
պեց սահմանապահ ջոկատի հրամանատարին:

—Եղ ում եք բռնել:

—Այնպես, ընկեր հրամանատար, աղջկին
այնտեղից ե յեկել: Ոտարերկրուհի յե:

—Դու ինչու յես շնորհ բերել այստեղ.—
հարցրեց հրամանատարը ուղղելով իր գեղին
բեխերն ու աղջկա կզակի տակ խուսուտ
տալով: —Անունդ ի՞նչ ե:

—Ասյա, հազիվ լելի ձայնով ասաց աղ-
ջեկը:

—Այ Ասյա, Ասյա: Հորդ անունն ինչ ե:

—Պավել:

—Ե՛ծ զառնաս գու: Պատիժ եք, ելի:

—Նա տրակտորով եր՝ հետաքրքրվում,—
ասում ե ավագ սահմանապահը: —Ի՞նչ անենք
սրան, ընկեր հրամանատար:

—Դրան տարեք մանկապարտեղ, իսկ վազը
հետ կուղարկենք:

Հրամանատարը շոշափում ե աղջկա
պատառութած կոպիտ հազուստը, նայում
նրա կապտավուն ձեռքերին, շոյում նրա



կեղտու, ամբողջապես ճանկուուված վոտքնէ
ու հառաչում։

* * *

Սահմանագլխին կյանքը լի յե մեծ ու
փոքր պատահարներով։ Կամ կով ե սահմանն
անցնում և պետք ե վերադարձնել տիրոջը,
կամ յերեխաներն են ճանապարհը կորցնում
և, իրենք ել այդ չիմանալով՝ ընկնում
ոտար յերկիր, կամ թե մի ուրիշ բան ե
պատահում։ Այն ժամանակ Խորհրդային և
ոտար սահմանամասերի հրամանատարները
պայմանավորված տեղում հանդիպում են ու
վճռում մի քանի որվա հավաքված գործերը։

Խորհրդային հրամանատարի և լեհական
պարետի տեսակցությունները սովորաբար
տեղի են ունենում կաղնու պուրակի մտտի
վտակի կամրջին, այսինքն՝ այն սահմանամա-
սում, վորտեղ Անտոշկան տեսել եր ոտար աղջ
կան։ Խորհրդային սահմանապահ ջոկատի հրա-
մանատարը հենց այդ տեղ ել գնաց։ Կամրջից
30 քայլ հեռու գտնվող բլրակի վրա կանգ-
նած եր լեհական պարետը՝ նիհար ու շեկ
մի մարդ։ Նա նախատում եր մի կորաքա-
մակ գյուղացու։ Դեռ կամրջին չհասած
հրամանատարը լսեց պարետի ծանոթ ու



վնգվնգան ձայնը: Պարետն ինչ-վոր չար
բան ե գոռում ու հեռանում գյուղացուց:
Նա կանգնած եր գլուխը քաշ, յերկար ու
ծանր թևերը կախ զցած:

Պարետը բարեեց խորհրդային հրամանա-
տարին:

— Իրենց խնքոտներին անտեր-անտիրա-
կան բաց են թողնում, յես պիտի փնտրեմ,—
դեռ շունչ չքաշած ասում ե նա:

— Մարդ ե կորել, — հարցնում ե հրամա-
նատարը:

— Ճենում եք, ելի, մի աղջիկ ե փախել
ձեր կողմը: Անասուններ: Ներեցեք, խնդրեմ...

— Իսկ յես նրան ճենց նոր տեսա: Նա մեզ
մոտ ե, — պատասխանում ե հրամանատարը: —
Յերբ եք տանելու:

— Վաղը: Թող նա միքիչ լաց լինի, — գլխով
ե անում պարետը դեպի գյուղացին, վոր կանգ-
նած եր մայր մտնող արեից լուսավորված
բլթին:

*
**

Մութն ընկնում եր, յերբ ավագ սահ-
մանապահն Ասյային հանձնեց մանկապար-
տեղի վարիչին: Աղջիկը քնած եր:

— Դուցեալչարժե արթնացնել, — նկատեց

սահմանապահը. Նա մեղք եր գալիս աղջկա
հանգիստ քունը խանգարել:

Վարիչը յերեխային զգուշությամբ տարավ
մի մաքուր սենյակ և բակից դայակին կան-
չեց. Նա իսկույն ջուր պատրաստեց, և աղ-
ջիկը միայն վաննայի մեջ բոլորովին արթ-
նացավ: Նա կասկածով նայում եր մանկա-
պարտեզի վարիչին՝ պարզ աշքերով, կլորերես,
շեկ մազերը փնջած կնոջն ու պառավ, կընճ-
ուռութած դայակին: Ասյայի գլուխը լվացին,
թաթխոցով (մաչալկա) վոտքերը տրորեցին:
Նա հնում եր, կնճուռավում, բայց լաց չեր
մինում:

— Դու մայր շունես:

Ասյան գլուխն ե որորում:

— Խեղմ, — շնչում ե դայակը: — Տես, Ե,
ամբողջ մարմինը ճանկուռված ու ճաքճք-
ված ե:

Ասյային դեռ սավանի մեջ չփաթաթած
նա նորից ե քնում և չի իմանում, թէ ինչ-
պես են իրեն շապիկ հազցնում, ինչպես են
անկողին դնում:

— Աննա Վասիլեվնա, — շնչում ե դա-
յակը, — այնպես ե քնել, ասես թագուհի լինի,
իսկ վաղն Ելի են կարիքը, Ելի են կեղտը:

Աննա Վասիլեվնան խոժոռվում է ու դա-
յակին չի պատասխանում:

Առավոտյան զարթնելով՝ Ասյան իր մահ-
ճակալի մոտ մի տղա տեսավ՝ իր պես սպի-
տակագլուխ: Նա ձեռքերը վարտիկի գրպանը
դրած՝ ապշած նայում եր Ասյային: Հետեն
ուրիշ տղաներ ել շատ կային կանգնած: Բոլորն
ել աչքերը գցել եյին անծանոթ աղջկան:

— Դու վտակի այն կողմիցն ես, — հարց-
րեց տղան:

— Յես յեկա մեքենան տեսնելու: — Յեկ
Ասյան սկսում ե պատմել թե տրակտորի,
թե շան մասին և թե հոր, վոր «ամբողջ որը
դաշտում տանջվում ե»:

— Ե՛, թող տրակտորի վրա նստի, — խոր-
հուրդ տվեց տղան:

— Մենք չունենք:

— Լավ բան չի, — ասաց տղան: — Բայց յե-
րեկ ձեզ մեքենայով ման ածեցին:

Աննա Վասիլեվնան յեկավ ու սկսեց Աս-
յային հազցնել: Աղջիկը շատ մեծ հետաքրը-
քը բությամբ նայում եր իր նոր, կարմիր հա-
գուստին:

— Իսկ դու գրել գիտե՞ս, — հարցրեց տղան
Ասյային:

Ասյան գլուխն որորեց:

— Ե-Եհ, — հիասթափված ծորացրեց տղան:
— Հապա ի՞նչ գիտես: Թմբուկ զարկել գիտե՞ս:
Իսկ Մայիսի մեկի մասին կարող ես յերգել:

Ասյան վոչ յերգել գիտեր, վոչ ել թըմ-
բուկ զարկել:

Նախաձաշից հետո յերեխաներն սկսեցին
խաղալ:

Տղան Ասյային քաշեց իր մոտ, ուզում
եր աղջկան թմբուկ զարկել և համաքայլք
սովորացնել, բայց աղջիկները տիկնիկներ ու-
նեյին, և Ասյան տղային թողնելով խաղով
տարվեց: Նա ել նույն լեզվով եր խոսում,
ինչպես բոլոր այդ յերեխաները, — չե՞ վոր
միայն վտակն եր իրենց բաժանում: Բանից
դուրս յեկավ, վոր նա ծիծաղաշրժ, բարի,
թեկ շատ վախկոտ, աղջիկ եր:

Ճաշից ու մեռյալ ժամից հետո տղան
Ասյային տարավ իր անկյունը: Անկյունում
կախ եր տված Ստալինի նկարը, ինչ-վոր
նկարներ ու մի կարմիր դրոշակ:

— Ես ով ե, — հարցնում ե Ասյան, ցույց
տալով Ստալինի նկարը:

3635-82



— Զես ճանաչում, — շվարում եւ տղան:

— Չե-ե:

— Տնաշեն: Ստալինն ե, ե:

Աղջիկն աշքերն արագ-արագ թարթելով
նայում եր նկարին:

— Նամեզ համար այս տունն ե շինել, խա-
ղալիքներ եւ նվիրում: Նա Մոսկվայում ե
ապրում: Նա ամենագլխավորն ե — այ թե նա
ինչ ե:

Խոսակցությունն ընդհատեց տրակտորիս-
տի գալլ:

— Հապա, ոտարերկրուհին ձեզ մոտ ի՞նչ-
պես ե ապրում, — հարցրեց Անտոշկան:

— Վոչինչ, սովորել ե:

— Իսկ յեսնրա համար ավտոմոբիլեմ շինել:
Յեվ Անտոշկան ցույց եւ տալիս փայտե-
մի մեծ բեռնատար ավտոմոբիլ:

Յերեխաներն Անտոշկային շրջապատում
են, խնդրում, վոր իրենց տրակտորով ման
ածի, իրենց համար ել այնպիսի մի ավտո-
մոբիլ շինի, ինչպես Ասյայի համար ե շինել:

— Հապա, ոտարերկրուհի, յերբ պիտի տուն
գնաս, — հարցնում ե Անտոշկան Ասյային:

Ասյան ժամանակ չի գտնում պատաս-
խանելու: Սենյակ ե մտնում Աննա Վասիլեվ-

նան և հետն ել՝ սահմանապահ ջոկատի հրա-
մանատարը: Նա Ասյայի հետեւից եր յեկել:

* * *

Յերբ Ասյային ասացին, վոր տուն պետք
ե գնա, նա լաց յեղափ: Սպիտակամագ տղան
կանգնեց նրա ու հրամանատարի արանքը:

— Իսկ յես նրան չեմ թողնի, — բարկացած
ու լցված ասաց նա:

Հրամանատարը ծիծաղեց ու տղային գըր-
կեց: Ասյային նվիրեցին հենց նույն տիկնիկը,
վոր ամբողջ որը նա ձեռքից բաց չեր թող-
նում: Տիկնիկը կարմրաթշիկ եր ու հաստ:
Խաղալիք ավտոմոբիլի մեջ դայակը դրեց Աս-
յայի լվացած, մաքրած շորերն ու մի հատ
ել նորը: Դայակն ավտոմոբիլի մեջ դրեց գուլ-
պա և մետաքսե մի կանաչ լաթ:

Անտոշկան առաջարկեց տիկնիկը նստեց-
նել ավտոմոբիլի բեռի վրա, բայց Ասյան
պինդ բոնել եր ձեռքում ու վոչ մի կերպ
չեր ուզում բաց թողնել:

Սպիտակամագ տղան ջոկատի հրամանա-
տարի փեշը թափ եւ տալիս:

— Ավտոն, ե, — ասում ենա:

— Շատ:

— Շատ: Կարելի՞ յե, յես նրան մի կարմիր դրոշակ նվիրեմ:

— Զի՞ կարելի:

— Ինչու:

— Նրանց յերկրում կարմիր դրոշակի համար բանտ են դնում:

— Բոլորին:

— Բոլորին:

Տղան հառաջեց, ձեռք տվեց Ասյային և յերկար ժամանակ հրաժեշտ եր տալիս նրան: Հետո գրանից ինչ-վոր կրծքանշան հանեց ու նվիրեց աղջկան:

Մի ժամից հետո ջոկատի հրամանատարն ու Ասյան մոտեցան կամքջին: Վտակի այն կողմը, բլրակին կանգնած եր յերեկվազյուղին՝ Ասյայի հայրը:

— Ե՞ն, ցտեսություն, ոտարերկրուհի,— ասաց սահմանապահ ջոկատի հրամանատարն ու համբուրեց Ասյային: Հետո նրան տարավ կամքջի մեջտեղը:

Ասյայի հայրը բլրակից լուռ իջափ, աղջկա թեր բոնեց ու տարավ տուն: Աղջիկը շուտ-շուտ հետ եր նայում, նրա ուսերը ցնցվում ելին. նա լալիս եր:



5175

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

366

Տ. 12
Տ. 12

1858

Н . ВИРТА.
ИНОСТРАНКА
ГИЭ АРМ. ССР, ЕРЕВАН